ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4768-Ա «25» նոյեմբերի 2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի Հ.1635-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով /այսուհետև՝ օրենք/, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի նոյեմբերի 20-ի հ.1635-Ն որոշումը, Երևան քաղաքում 2025 թվականի շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ձմեռային զորակոչի անցկացման աշխատանքների համակարգման նպատակով.

1. Ընդունել ի գիտություն, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի նոյեմբերի 20-ի հ.1635-Ն որոշման 6-րդ կետով ստեղծվել է Երևանի քաղաքային զորակոչային հանձնաժողով:

2. Հանձնարարել.

1) Երևանի քաղաքային զորակոչային հանձնաժողովին՝

ա.ներկայացնել եզրակացություններ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հիմքերով քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին.

բ. ներկայացնել եզրակացություններ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 24-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հիմքերով շարքային կազմի քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին.

գ. առաջարկություն ներկայացնել հանրապետական զորակոչային հանձնաժողով՝ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքով քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կամ քաղաքացու դիմումը մերժելու վերաբերյալ.

2) Երևանի վարչական շրջանների ղեկավարներին՝ մասնակցել զորակոչի կազմակերպմանը և աջակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի Երևանի զինվորական կոմիսարիատներին.

3) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետին՝ անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի Երևանի զինվորական կոմիսարիատներին ապահովել ավտոտրանսպորտային միջոցներով.

4) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12–ի հ.405–Ն որոշման հ.1 հավելվածի 14–րդ և 17–րդ կետերի համաձայն՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի Երևանի զինվորական կոմիսարիատների հետ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի նոյեմբերի 20–ի հ.1635–Ն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին ներկայացնել բժիշկ մասնագետների թեկնածությունները:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առաջին և զորակոչային հարցերի կազմակերպման բաժնի վրա:

4. Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ